

ՀԵՐՄՈՆ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Գայ Օհանյան

Հեռախոս՝ +374.93.072210

Հերմոն գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզում, մարզկենտրոնից 16կմ հյուսիսարևելք: Հերմոնով է անցնում Եղեգնաձոր-Վարդահովիտ, Եղեգնաձոր-Գողթանիկ ճանապարհները: Գյուղն ունի գեղեցիկ բնություն, երկայնքով հոսում է Արատես գետը: Մինչև 1988 թվականը Հերմոնում գյուղում ապրել են ադրբեջանցիներ, իսկ հետո վերաբնակեցվել է Ադրբեջանից ու Լեռնային Ղարաբաղից Հայաստան բռնագաղթված հայերով:

Հերմոն գյուղից դեպի հյուսիս-արևմուտք գտնվում է Արատեսի վանքը: Այն գտնվում էր Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառում: Վանքի համակառույցը բաղկացած է իրար կից չորս մեծ, հինգ փոքր շենքերից: Հնագույն արձանագրություններում եկեղեցիներն անվանվել են Սուրբ Միոն, Սուրբ Կարապետ և Սուրբ Աստվածածին: Ենթադրվում է, որ այն հիմնադրվել է 7-րդ դարում, թեև ամենահին գրավոր տեղեկությունը 9-րդ դարի է: Գմբեթավոր եկեղեցին՝ Սուրբ Աստվածածինը, կառուցվել է 0-րդ դարում, իսկ Սուրբ Կարապետը՝ 11- 12-րդ դարերում: Ուշագրավ է վերջինիս գավիթը, որի ճարտարապետը եղել է Սիրանեսը (13-րդ դար): 13-րդ դարում Վայոց ձորի իշխան Տարսայիճ Օրբելյանն Արատեսի վանքին է նվիրել մի քանի գյուղեր, որից հետո վանքը դարձել է Նորավանքի ամառանոցը: Իսկ 10-14-րդ դարերում այն եղել է գրչության խոշոր կենտրոն :

Հերմոն գյուղից հարավ-արևմուտք, լեռան վրա բազմաձև է շքեղաշուք Հերմոնի վանքը /Կենվանք/: Այն եղել է Սյունյաց աշխարհի կրոնական, մշակութային նշանավոր կենտրոն: Հերմոնի վանքը 936 թվականին հիմնադրել են Սյունյաց գահերեց իշխան Սմբատը և Հակոբ եպիսկոպոսը: 1338 թ. այստեղ է հաստատվել Եսայի Նչեցու աշակերտ Տիրատուր վարպետը և հիմնադրել նոր դպրոցի՝ Հերմոնի վանքի դպրոցը, որը գործել է մինչև 15-րդ դարի վերջը: Հերմոնի վանքում շուրջ հարյուր տարի գործել է գրչության դպրոցը, որտեղից մեզ են հասել մեկ տասնյակից ավելի ձեռագրեր, մեկնություններ: Գյուղից 3 կմ հարավ-արևմուտքում է գտնվում նաև Սբ. Գրիգոր եկեղեցին (XVI դար):

Հերմոն համայնքի վարչական տարածքի մեջ է մտնում Կալասար գյուղը: Այն գտնվում է Վարդենիսի լեռնաշղթայի հարավային լանջին, Արփայի աջակողմյան վտակ՝ Եղեգիս գետի հովտում, Հերմոն գյուղից 1կմ հյուսիսարևմուտք և մարզկենտրոնից մոտ 17կմ հյուսիս-արևելք: Կալասարը նախկինում մտնում էր Երևանի նահանգի Շարուր-Ռալազյազի գավառի մեջ: ԽՍՀՄ-ի տարիներին ադրբեջանաբնակ Կալասարը միավորված էր Հերմոն, գյուղի հետ մեկ տնտեսության մեջ: Ներկայումս Կալասարը բնակեցված չէ, սակայն հիմա էլ նշմարվում են եկեղեցու ավերակներ:

Բնակիչները հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Մշակում են բանջարաբոստանային և ցանովի մշակաբույսեր: Զբաղվում են անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: Գյուղն ունի դպրոց և բուժկետ: